# 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Բովանդակություն


1. Ընդհանուր նկարագրություն
2. Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները
3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը
4. Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը
5. Կառավարության պարտքը 2021 թվականի տարեվերջին


## 1. Ընդհանուր նկարագրություն

2021 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2021թ. պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

| *Ցուցանիշներ* | *2021թ.* |
|---|---|
| ՀՆԱ, մլրդ դրամ | 6,395.3 |
| Իրական աճ, % | 3.2 |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր, % | 2.0 |
| Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ | 1,509.5 |
| Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ | 1,850.9 |
| Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ | (341.4) |
| Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | (5.3) |
| Փոխարկումների համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք | 493.76 |

2020 թվականի հուլիսի 10-ին հաստատված կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրի հիմքում դրված է եղել միանգամայն այլ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակ:

## 2. Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի պակասուրդը կանխատեսվում է 341.4 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 138.7 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ 202.7 մլրդ դրամով:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները հետևյալն են.

| մլրդ դրամ | 2021թ. (պետբյուջե) |
|---|---|
| **Ընդամենը պակասուրդ** | **341.4** |
| այդ թվում՝ | |
| **Ներքին աղբյուրներ** | **138.7** |
| որից | |
| **Փոխառու զուտ միջոցներ** | **209.9** |
| գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր | 369.6 |
| գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում | (159.6) |
| մուրհակների մարում | (0.1) |
| **Ֆինանսական զուտ ակտիվներ** | **(71.2)** |
| վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ) | (45.2) |
| կայունացման դեպոզիտային հաշվի համալրում և օգտագործում (զուտ) | (26.0) |
| **Արտաքին աղբյուրներ** | **202.7** |
| որից | |
| **Փոխառու զուտ միջոցներ** | **268.1** |
| վարկերի և փոխատվությունների ստացում | 152.2 |
| ստացված վարկերի և փոխատվությունների մարում | (126.1) |
| կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառությունների գծով մուտքեր | 241.9 |
| կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառությունների գծով մարում/հետգնում | - |
| **Ֆինանսական զուտ ակտիվներ** | **(65.3)** |
| վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ) | (63.9) |
| բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում | (1.4) |

## 3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2021 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 478.1 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 210.0 մլրդ դրամ, արտաքին վարկերի հաշվին՝ 26.1 մլրդ դրամ և արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին՝ 241.9 մլրդ դրամ:

### 3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10, 20 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կուսումնասիրվի 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական

կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալների ավելացման միջոցով դրանց՝ որպես ուղենշային սահմանման հնարավորությունները:

2021 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր: 2021 թվականի ընթացքում կտեղաբաշխվեն 2031 թվականի հոկտեմբերի 29-ին և 2050 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա երկարաժամկետ պարտատոմսերը, որոնց թողարկումն իրականացվել է համապատասխանաբար 2020 թվականի հոկտեմբերի 29-ին և 2019 թվականի հոկտեմբերի 29-ին:

**Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց**

**Հունվար 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | 1 | 2 | 3 |
| 2 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 3 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 4 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 5 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |

**Փետրվար 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 8 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 9 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |

**Մարտ 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 11 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 12 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 13 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 14 | 29 | 30 | 31 | | | | |

**Ապրիլ 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | | | | 1 | 2 | 3 | 4 |
| 15 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 16 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 17 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 18 | 26 | 27 | 28 | 29 | 30 | | |

**Մայիս 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | | | | | | 1 | 2 |
| 19 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 20 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 21 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 22 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| 23 | 31 | | | | | | |

**Հունիս 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 24 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 25 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 26 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 27 | 28 | 29 | 30 | | | | |

**Հուլիս 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 27 | | | | 1 | 2 | 3 | 4 |
| 28 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 29 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 30 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 31 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | |

**Օգոստոս 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | | | | | | | 1 |
| 32 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 33 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 34 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 35 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 |
| 36 | 30 | 31 | | | | | |

**Սեպտեմբեր 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 37 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 38 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 39 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 40 | 27 | 28 | 29 | 30 | | | |

**Հոկտեմբեր 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 40 | | | | | 1 | 2 | 3 |
| 41 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 42 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 43 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 44 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |

**Նոյեմբեր 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 46 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 47 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 48 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 49 | 29 | 30 | | | | | |

**Դեկտեմբեր 2021**

| Շաբաթ | ԵՐԿ | ԵՐՔ | ՉՐՔ | ՀՆԳ | ՈՒՐԲ | ՇԲԹ | ԿԻՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 50 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 51 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 52 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 53 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |

- Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր
- Պետական գանձապետական միջնաժամկետ պարտատոմսեր
- Պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

Շուկայական իրավիճակից ելնելով՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, գործակալների հետ խորհրդակցելու արդյունքում, կարող է փոփոխել ներկայացված օրացույցը կամ չեղարկել աճուրդի օրերը:

Կարող են իրականացվել պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Ապրիլի 29-ը և հոկտեմբերի 29-ը, որոնց վրա կենտրոնացված են արժեկտրոնային պարտատոմսերի տոկոսավճարներն ու մարումները, հանդիսանում են աճուրդների պահուստային օրեր:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ելնելով փոխառության կարիքից և շուկայի միտումներից, կարող է հայտարարել լրացուցիչ աճուրդի օրեր:

2021 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2021 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: Որպես կանոն, պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումները կիրականացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների օրերին: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am պաշտոնական կայքում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակվի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

### 3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2021 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 152.2 մլրդ դրամի (308.2 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[1]: Ընդ որում մասհանումներից 102.8 մլրդ դրամը (208.2 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 49.4 մլրդ դրամը (100.0 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2021 թվականին մասհանումների 32.4%-ը կատարվելու են նոր բյուջետային աջակցության վարկերի գծով, 22.6%-ը՝ Համաշխարհային Բանկի (ՎԶՄԲ և ԶՄԸ) վարկերի գծով, 20.5%-ը՝ գերմանական KFW բանկի վարկերի գծով, 11.6%-ը՝ Ասիական Զարգացման Բանկի վարկերի գծով: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.




2021 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույնը գերմանական KfW բանկի աջակցությամբ իրականացվող Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի ծրագիրն է՝ 48.1 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.

[1] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:




2021 թվականին մասհանումների գերակշիռ մասը (62.4%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:







### 3.3. Պակասուրդի ֆինանսավորումը կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառություններով

Կապիտալի միջազգային շուկաներից նախատեսվում է ներգրավել 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք փոխառություններ, որոնց գծով մուտքը կանխատեսվում է 241.9 մլրդ դրամ:

# 4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2021 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 480.4 մլրդ դրամ, որից 285.7 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 194.7 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

| մլրդ դրամ | մարում | սպասարկում | **ընդամենը** |
|---|---|---|---|
| Պետական գանձապետական պարտատոմսեր | 159.6[2] | 112.3 | **271.9** |
| Արտարժութային պետական պարտատոմսեր | - | 36.3 | **36.3** |
| Արտաքին վարկեր | 126.1 | 46.2 | **172.3** |
| **Ընդամենը** | **285.7** | **194.7** | **480.4** |




ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի՝ հիմք ընդունելով 2020թ. նոյեմբերի 2-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (կիրառելով համապատասխան ճշգրտման գործակից, քանի որ փաստացի վճարումները կատարվելու են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքներով) և այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2021 թվականին միջին հաշվով կկազմի 1.0%, 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը, իսկ SDR-ի տոկոսադրույքը կկազմի 1.2%:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 159.6 մլրդ դրամի մեջ 28 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

---

[2] *Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 28 մլրդ դրամը:*

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 172.2 մլրդ դրամ (348.8 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

| մլն ԱՄՆ դոլար | տոկոսավճար | մարում | **ընդամենը** |
|---|---|---|---|
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ | 19.9 | 13.1 | **3.0** |
| Զարգացման Միջազգային Ընկերակցություն | 10.5 | 76.7 | **87.2** |
| Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ | 0.6 | 4.0 | **4.6** |
| Եվրոպական Ներդրումային Բանկ | 2.2 | 4.8 | **7.1** |
| Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ | 0.7 | 4.1 | **4.8** |
| ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ | 2.1 | 5.3 | **7.4** |
| Ասիական Զարգացման Բանկ | 16.8 | 45.6 | **62.4** |
| Եվրամիություն | 2.7 | - | **2.7** |
| Արժույթի Միջազգային Հիմնադրամ | 6.3 | 19.6 | **25.9** |
| Եվրասիական Զարգացման Բանկ | 7.3 | 0.1 | **7.4** |
| Գերմանիա (ՎՎԲ) | 6.5 | 22.1 | **28.6** |
| Ռուսաստանի Դաշնություն | 11.6 | 40.0 | **51.6** |
| Ֆրանսիա | 1.9 | 1.6 | **3.5** |
| ԱՄՆ | 0.3 | 1.9 | **2.1** |
| Ճապոնիա | 2.0 | 11.6 | **13.6** |
| Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ | 0.1 | 0.7 | **0.8** |
| Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ | 0.5 | 1.7 | **2.1** |
| ԿԲՍ Բանկ (Բելգիա) | 0.0 | 0.6 | **0.6** |
| Ռայֆայզն Բանկ (Ավստրիա) | 0.1 | 1.1 | **1.1** |
| Էռստե Բանկ (Ավստրիա) | 0.1 | 0.8 | **0.9** |
| Բյուջետային աջակցության վարկեր՝ աղբյուրն ենթակա է հետագա հստակեցման | 1.4 | - | **1.4** |
| **Ընդամենը** | **93.5** | **255.3** | **348.8** |

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2021 թվականին կկազմեն 73.4 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումների համար:

## 5. Կառավարության պարտքը 2021 թվականի տարեվերջին

ՀՀ 2021թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,222 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 66.0 տոկոսը և 2020 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կավելանա 4.5 տոկոսային կետով: Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2021-2023

թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

| | առ 31.12.2019թ. | առ 31.12.2020թ. | առ 31.12.2021թ. |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ | 3 277 | 3 739 | 4 222 |
| ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար | 6 832 | 7 572 | 8 551 |
| ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ում | 49.9 | 61.5 | 66.0 |

Հաշվի առնելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները՝ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2021թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

| | Ուղենիշ | 2021թ. (կանխ.) |
|---|---|---|
| **Վերաֆինանսավորման ռիսկ** | | |
| Մինչև մարում միջին ժամկետը | **8 – 11 տարի** | 8.4 տարի |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին) | **առավելագույնը 20%** | 10.3% |
| **Տոկոսադրույքի ռիսկ** | | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | **առնվազն 80%** | 80.7% |
| **Փոխարժեքի ռիսկ** | | |
| Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | **առնվազն 25%** | 29.5% |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | **առնվազն 25%** | 27.9% |

Նախատեսվում է 2021 թվականին կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի 27.9%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

| | առ 31.12.2019թ. | առ 31.12.2020թ. | առ 31.12.2021թ. |
|---|---|---|---|
| **Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*** | | | |
| ներքին պարտք | 737 | 1 011 | 1 243 |
| արտաքին պարտք | 2 540 | 2 728 | 2 978 |
| **Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ** | | | |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 2 066 | 2 273 | 2 299 |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 681 | 968 | 1 178 |
| արտարժութային պետական պարտատոմսեր | 527 | 494 | 741 |

| | առ 31.12.2019թ. | առ 31.12.2020թ. | առ 31.12.2021թ. |
|---|---|---|---|
| արտաքին երաշխիքներ | 4 | 4 | 4 |
| ներքին երաշխիքներ | - | - | - |
| **Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ** | | | |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 681 | 968 | 1 178 |
| արտարժույթով ներգրավված պարտք | 2 596 | 2 771 | 3 044 |
| **Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ** | | | |
| լողացող տոկոսադրույքով | 530 | 727 | 814 |
| ֆիքսված տոկոսադրույքով | 2 747 | 3 012 | 3 407 |

** 2020 և 2021 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության՝ հիմք ընդունելով 2020թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները*













2021 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 37.7%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.




2021 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.




2021 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 4.7%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 3.0%-ը:

| | 2019թ. | 2020թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| **Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար),** մլրդ դրամ | 157.5 | 166.7 | 194.7 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 2.4 | 2.7 | 3.0 |
| **Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք,** % | 4.8 | 4.9 | 4.7 |